# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**1.Անուն Ազգանուն**
Անահիտ Ավանեսյան

**2. Զբաղեցրած պաշտոնը**
ՀՀ առողջապահության նախարար

**3. Գործուղման վայրը և ժամկետները**
Հռոմ, Իտալիայի Հանրապետություն, 2023 թ. հունիսի 12-15

**4. Հրավիրող կողմը**
Մալթայի Ինքնիշխան Ուխտ

**5. Գործուղման նպատակը**
Մասնակցություն Հայաստանի Հանրապետության և Մալթայի Ինքնիշխան Ուխտի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակին նվիրված պաշտոնական ընդունելությանը

**6. Քննարկված թեմաները**
Իտալիայի Հանրապետություն կատարած այցի շրջանակներում ներկա եմ գտնվել Հայաստանի և Մալթայի Ուխտի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակի առթիվ Հռոմում գտնվող Վարպետաց պալատում կազմակերպված պաշտոնական ընդունելությանը:

Սուրբ Աթոռում Հայաստանի դեսպան Կարեն Նազարյանի ուղեկցությամբ հանդիպել եմ Մեծ կանցլեր (ԱԳ նախարար) Ռիկարդո Պատեռնո դի Մոնտեկուպոյի հետ՝ քննարկելու հումանիտար բնագավառում երկկողմ ծրագրերի իրականացման ընթացքը:

Այցի շրջանակում հանդիպումներ եմ ունեցել նաև Հռոմում տեղակայված համայնքային ավանդական կառույցներում, այդ թվում՝ Քահանայապետական Լևոնյան հայ վարժարանում և Հայ կաթողիկե քույրերի միաբանությունում:

Գործուղման ընթացքում Իտալիայի նախկին վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնիի մահվան կապակցությամբ մեկնել եմ Միլան՝ հուղարկավորությանը մասնակցելու նպատակով:

**7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**
Պաշտոնական ընդունելության ժամանակ ելույթ եմ ունեցել՝ հայտնելով հայ ժողովրդի երախտագիտությունը Հայաստանում Մալթայի Ուխտի կողմից առողջապահության բնագավառում իրականացված ծրագրերի համար:

Հռոմում տեղակայված համայնքային ավանդական կառույցներում կայացած հանդիպումներին նույնպես հանդես եմ եկել երախտագիտության խոսքով՝ Հայաստանում և սփյուռքում երկարամյա մարդասիրական, բարեգործական գործունեության համար և քննարկել համատեղ ծրագրերն ընդլայնելու հնարավորությունները:

**8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Հանդիպումների ժամանակ կողմերը վերահաստատեցին հումանիտար և առողջապահության բնագավառներում երկկողմ գործակցությունը խթանելու իրենց պատրաստակամությունը:

**9. Առաջարկությունները**

Կողմերը ջանքեր կգործադրեն՝ աջակցելու Հայաստանում Մալթայի Ուխտի կողմից առողջապահության բնագավառում իրականացվող ծրագրերին:

**10. Ստորագրությունը, ամսաթիվը**

19 հունիսի 2023 թ.

*«Հավելված N 3*

*ՀՀ վարչապետի 2018 թ.*

*սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման*

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը — ՀՀ առողջապահության նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը — N617-Ա 06.06.2023թ. Փոփոխված N667-Ա 21.06.2023թ.
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) (*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*) — Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյան
4. Գործուղման վայրը — Իտալիայի Հանրապետություն ք. Հռոմ
5. Գործուղման ժամկետները — 2023թ.հունիսի 12-15-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*) — ____________

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը — Ճանապարհածախս, գիշերավարձ և օրապահիկ

*(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)*

*(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)*

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

| Ծախսի տեսակը | | *Անուն, ազգանուն 1* | **Ընդամենը** (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Ճանապարհածախս | Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս) | Էկոնոմ դաս Անահիտ Ավանեսյան | |
| | Ավիատոմսի արժեքը (դրամ) | 423,613.0 | 423.61 |
| Գիշերավարձ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | € 116.00 | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 49,294.2 | |
| | Օրերի քանակը | 3 | |
| | Ընդամենը (դրամ) | 147,882.6 | 147.88 |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | € 116.00 | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 49,294.2 | |
| | Օրերի քանակը | 4 | |
| | Ընդամենը (դրամ) | 197,176.8 | 197.18 |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային նմուշառումների վճար | | |
| | Մուտքի արտոնագրի վճար | | |
| | Այլ ծախսեր (նկարագրել) | | |
| **Ընդամենը ծախսեր** (հազ. դրամ) | | **768.67** | **768.67** |

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը — 22.06.2023թ.

(ստորագրություն)